**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/53**

ք. Երևան « 09 » « 06 » 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «ՀարՄան» ՍՊԸ –ն՝ ի դեմս տնօրեն Լ.Սիմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողը իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3016600 (երեք միլիոն տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8. 3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Սույն պայմանագրի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով սահ-

վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «ՁարՄան» ՍՊԸ |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | ՀՀ ք. Երևան, |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | Ռոմանոս Մելիքյան 1 |
| գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900000909623 | Հ/Հ 2050022433221001 |
| ՀՎՀՀ 02698732 | ՀՎՀՀ 01269988 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Տնօրեն՝ |
| Գ.Սաֆարյան | Ա.Միհոնյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավել
« 09 » 06 2022թ.
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-22/53 ծածկագրով պայմ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժինները | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը | միավորի գինը դրամ | ընդամենը գինը դրամ | Մատուցման ժամկետ |
| 1 | 37521140/1 | կրթական խաղեր-1 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Փափուկ գնդակներ**» Խաղ՝ ուղղված շփման և հաղորդակցման ունակությունների զարգացմանը: Հավաքածուն ներառում է 5-6 գույն ունեցող հինգ տարբեր չափերի գործած գնդակներ: Պատրաստված է ակրիլե թելից, սինտեպոնից (ոչ գործվածքային նյութ): Գնդակների շրջանագծերը մեծից փոքր՝ 35սմ, 30սմ, 25սմ, 20սմ, 15սմ ռեզինից: | հատ | 34 | 6500 | 221000 | Մինչև դեկտեմ |
| 2 | 37521140/2 | կրթական խաղեր-2 | Գնման առարկա է հանդիսանում խաղ ՝ «**Գործիքների հավաքածու**» Սյուժետադերային խաղերի համար նախատեսված հավաքածու՝ աշխատանքային պարագաներ: Պատրաստված է էկո փայտից, անվտանգ ներկերից: Նախատեսվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Տուփը՝ 25x10x15սմ | հատ | 34 | 6500 | 221000 | Մինչև դեկտեմ |
| 3 | 37521140/4 | կրթական խաղեր-3 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Աղջիկ-Տղա**» Խաղ՝ մարդու մարմնի, արտաքին տեսքի մասին պատկերացումների զարգացման համար: Պատրաստված է նրբատախտակից,կպչանից, կտորից, տպագրված թղթից: Չափերը՝բարձրությունը 40սմ է, նրբատախտակի հաստությունը՝ 0.4մմ | հատ | 34 | 7000 | 238000 | Մինչև դեկտեմ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 37521140/7 | կրթական խաղեր-4 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Ձեռնոց**» Տիկնիկ՝ ձեռնոց: Պատրաստված է կտորից, սինտեպոնից (ոչ գործվածքային նյութ), թելից, ուլունքից: Երկարությունը և լայնությունը 25սմ են: | հատ | 34 | 5000 | 170000 | Մին դեկտ |
| 5 | 37521140/8 | կրթական խաղեր-5 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Դիմակ**» Խաղ՝ ուղղված հույզերի դրսևորումների զարգացմանը և դրանց արտաքին ճանաչմանը: Պատրաստված է նրբատախտակից, ջրային Վահանակ՝ 38x29x0.4սմ: հիմքով ներկից, կպչանից, լաքից, կտորից, ակրիլե թելից: | հատ | 34 | 5000 | 170000 | Մին դեկտ |
| 6 | 37521140/9 | կրթական խաղեր-6 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Փափուկ ժամացույց**» Խաղ՝ ուղղված ժամացույցից օգտվելու հմտության զարգացմանը: Պատրաստված է կտորից, ակրիլե թելից, կպչաններից, սպունգից: Շրջանի տրամագիծը 40սմ է, եռանկյունը՝ 9x9x8սմ, սլաքները 12 և 9 սմ երկարությամբ են: | հատ | 34 | 7000 | 238000 | Մին դեկտ |
| 7 | 37521140/10 | կրթական խաղեր-7 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Փայտե փազլ 10 կտորից** » Մանր մոտորիկայի և իմացական ոլորտի զարգացմանն ուղղված խճանկարների հավաքածու: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից:Հավաքածուն ներառում է խճանկարի 10 գունավոր փայտե մասեր: Կախված ներկայացված պատկերից՝ միջին երկարությունը 23-28սմ է, լայնությունը՝ 14-15 սմ: | հատ | 34 | 3500 | 119000 | Մին դեկտ |
| 8 | 37521140/11 | կրթական խաղեր-8 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Բուրգ կլոր/ուղղանկյուն**» Խաղ՝ նախատեսված չափի, մեծության և քանակական պատկերացումների ձևավորման համար: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից: Բարձրությունը՝ 8.25սմ, լայնությունը 3.5սմ, երկարությունը՝ 11սմ: | հատ | 36 | 2500 | 90000 | Մին դեկտ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37521140/12 | կրթական խաղեր-9 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Տնակ երկրաչափական մարմիններով**» Սեգենի տախտակներ՝ երկրաչափական պատկերներով: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից և լաքից: Չափերը՝ տնակը 27 x 23x0.7սմ է: | հատ | 2 | 6000 | 12000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/13 | կրթական խաղեր-10 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ « **Կախարդական տուփ**» Խաղ՝ ուղղված չափի, ձևի, գույնի ընկալման ձևավորմանն ու զարգացմանը: Պատրաստված է նրբատախտակից, ջրային հիմքով ներկերից, լաքից: Մեծ տուփը՝ 18x18x 18 սմ: | հատ | 2 | 12000 | 24000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/14 | կրթական խաղեր-11 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Գնացք երկրաչափություն**» Խաղ՝ երկրաչափական պատկեներով գնացք: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով լաքից, ներկից: Յուրաքանչյուր վագոնի երկարությունը 14սմ է, գնացքի Ընդհանուր: | հատ | 34 | 6000 | 204000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/15 | կրթական խաղեր-12 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Փայտե նյութերի հավաքածու /40-45 կտորից+պարկով**» Խաղ՝ նախատեսված երևակայության, տրամաբանական մտածողության, գունազգացողության, կառուցողական հմտությունների, նուրբ շարժողականության զարգացման համար: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից: Երկրաչափական մարմիններն ունեն տարբեր չափեր : | հատ | 2 | 12900 | 25800 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/16 | կրթական խաղեր-13 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Ուրախ երկրաչափություն**» Խաղ՝ ուղղղված ուշադրության, հիշողության, տեսատարածական ընկալման զարգացմանը: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից, թելից: Հիմքը՝ 18 x 18x0.7սմ: | հատ | 34 | 5200 | 176800 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 37521140/17 | կրթական խաղեր-14 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Հետագիծ**» Խաղ՝ ուղղված ուշադրության կենտրոնացմանը: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, երկաթե ծխնիներից, ջրային հիմքով ներկերից, թելից: Տուփ՝ 50x30x4սմ, քարտեր՝ 8x8սմ: | հատ | 2 | 15000 | 30000 | Մինչ դեկտե |
| 15 | 37521140/18 | կրթական խաղեր-15 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Հիշողության գունավոր օղակներ**» Գունավոր հիշողության օղակներ: Պատրաստվա է նրբատախտակից, ջրային հիմքով լաքից, կտորից: Չափերը՝ հիմքը՝ 12x5x3սմ,բարձրությունը 10.5սմ: | հատ | 2 | 6500 | 13000 | Մինչ դեկտե |
| 16 | 37521140/19 | կրթական խաղեր-16 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Ի՞նչ է սա** » Խաղ՝ ուղղված ուշադրության կենտրոնացման, սպասելու հմտության, պատկերի ամբողջական ընկալման: Պատրաստված է նրբատախտակից, ջրային հիմքով լաքից,կտորից: Պարկը 22x30սմ է, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 2 | 4000 | 8000 | Մինչ դեկտե |
| 17 | 37521140/20 | կրթական խաղեր-17 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Երկրաչափական պատկերների արկղ**» Խաղ՝ ուղղված տեսատարածական ընկալման, ուշադրության, մտածողության (դասակարգել, համադրել): Պատրաստված է փայտից, լաքից: Չափսը՝ 0.16 x 0.09 x 0.06 մ: | հատ | 2 | 5000 | 10000 | Մինչ դեկտե |
| 18 | 37521140/21 | կրթական խաղեր-18 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Կազմիր տրամաբանական զույգը**» Խաղ ասոցիացիաներ՝ ուղղված ընդհանրացնող անվանումների ընկալմանը, կենցաղի վերաբերյալ գիտելիքների հարստացմանը: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, թղթից, լաքից: Տուփը՝ 20x13x4սմ, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 34 | 6500 | 221000 | Մին դեկտ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37521140/22 | կրթական խաղեր-19 | Խաղ ասոցիացիաներ՝ ուղղված տրամաբանության, հիշողության, մտածողության, ուշադրության զարգացմանը, պատճառահետևանքային կապի ընկալմանը, բառապաշարի հարստացմանը: Պատրաստված է նրբատախտակից, լամինացված տպագրված ստվարաթղթից, լաքից: Տուփը 20x13x4սմ է, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 34 | 6500 | 221000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/23 | կրթական խաղեր-20 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝« **Տրամաբանական կապեր»** Իմացական ոլորտի և բառապաշարի զարգացմանն ուղղված քարտեր՝ տրամաբանական կապեր: Պատրաստված է նրբատախտակից, լամինացված տպագրված ստվարաթղթից, լաքից: տուփը 20x13x4սմ, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 4 | 6500 | 26000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/24 | կրթական խաղեր-21 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Ո՞վ ի՞նչ է ուտում** » Պատճառահետևանքային կապի ընկալմանը, խոսքի բառաքերականական կողմի, հնչյունավանկային վերլուծություն կատարելու ունակության զարգացմանը, բառապաշարի հարստացմանն ուղղված քարտեր: Պատրաստված է նրբատախտակից, լամինացված տպագրված ստվարաթղթից, լաքից: տուփը 20x13x4սմ, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 4 | 6500 | 26000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/25 | կրթական խաղեր-22 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Տե՛ս և կազմիր նույնը»** Խաղ՝ ուղղված երկրաչափական պատկերների տարբերակմանը, տեղի, չափի, քանակի, գույնի ընկալմանը, բառապաշարի հարստացմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Պատրաստված է նրբատխտակից, լամինացված ստվարաթղթից, ջրային հիմքով լաքից: Տուփը՝ 26.5x15.5x2.5սմ, քարտերը՝ 8x8սմ: | հատ | 2 | 5500 | 11000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/26 | կրթական խաղեր-23 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Լոտո «Տուն և կենցաղ»** Իմացական ոլորտի և բառապաշարի զարգացմանն ուղղված լոտոներ՝ կենցաղային իրեր: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, լաքից: Տուփը՝ 21.5x15x2.5սմ: | հատ | 2 | 6800 | 13600 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7521140/27 | կրթական խաղեր-24 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «Լոտո «Բնության բարիքներ»»<br><br>Իմացական ոլորտի և բառապաշարի զարգացմանն ուղղված լոտոներ՝ բնություն: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, լաքից: Տուփը՝ 21.5x15x2.5սմ: | հատ | 2 | 6800 | 13600 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 7521140/28 | կրթական խաղեր-25 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Լոտո ‹‹Կենդանական աշխարհ››**<br><br>Իմացական ոլորտի և բառապաշարի զարգացմանն ուղղված լոտոներ՝ կենդանիներ: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, լաքից: Տուփը՝ 21.5x15x2.5սմ: | հատ | 2 | 6800 | 13600 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 7521140/29 | կրթական խաղեր-26 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Որտեղ, որքան, ինչպիսի /գնահատման քարտեր/»**<br>Իմացական ոլորտի և բառապաշարի զարգացմանն ուղղված քարտեր: Պատրաստված է նրբատախտակից, տպագրված լամինացված ստվարաթղթից, ջրային հիմքով լաքից: Տուփ՝ 11.5x11.5x2.5 սմ, քարտ 8x8 սմ: | հատ | 2 | 5500 | 11000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 7521140/30 | կրթական խաղեր-27 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Հույզեր /գնահատման քարտեր/»**<br>Խաղ՝ ուղղված հույզերի ճանաչմանը, ապրումակցմանը, գործողությունների անվանումների ճանաչմանը: Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կպչանից: Կտորե գիրք՝ 23x16.5սմ: | հատ | 34 | 3200 | 108800 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 521140/31 | կրթական խաղեր-28 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Իմ օրը /գնահատման քարտեր/»**<br>Խաղ՝ ուղղված օրվա ընթացքում կատարվելիք հիմնական գործողությունների և դրանց անվանումների ընկալմանը: Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կպչանից: Կտորե գիրք՝ 23x16.5սմ: | հատ | 2 | 3200 | 6400 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37521140/32 | կրթական խաղեր-29 | Խաղ՝ նախատեսված հիշողության, մտածողության, տարրական մաթեմատիկական հմտությունների, կապակցված խոսքի, գույնի ընկալմանը, բառապաշարի հարստացմանը: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, ջրային հիմքով: Տուփը՝ 22x14x3սմ: | հատ | 2 | 7000 | 14000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/33 | կրթական խաղեր-30 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Կախարդական գրատախտակ»** Խաղեր՝ նախատեսված հիշողության, կամածին ուշադրության, տառի գրաֆիկական պատկերի ընկալման զարգացման համար: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, օրգանական ապակուց, թղթից, լաքից: Տուփը՝ 0.33 x 0.26 x 0.04 մ, տպագրված թղթերը՝ A4: | հատ | 2 | 7000 | 14000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/35 | կրթական խաղեր-31 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ **«Տառերի բեռնատար»** Խաղ՝ նախատեսված բանավոր խոսքի, լեզվամտածողության զարգացմանը: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, ջրային հիմքով ներկից և լաքից, ինքնակպչուն թղթից (օրակալ): Երկարությունը 42սմ է, խցիկը՝ 9x11սմ, բեռնախցիկը՝ 33x16.5,x3.5սմ, խորանարդիկները՝ 3x3x3սմ: | հատ | 2 | 8000 | 16000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/36 | կրթական խաղեր-32 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Պատկերազարդ խորանարդիկներ»** Խաղ՝ ուղղված լեզվամտածողաության, խոսքի (ճիշտ հնչարտաբերության, կապակցված խոսքի, բառապաշարի և տառաճանաչության), զարգացմանը: Պատրաստված է փայտից, տպագրված լամինացված թղթից, ջրային հիմքով լաքից, ալյումինե ձողերից:Հավաքածուն ներառում է փայտե հիմքի վրա 2 շարքովամրացված տասը ձողեր, որոնց վրա անց են կացվում հիսուն պատկերազարդ խորանարդիկներ՝մի կողմում այբուբենի տառը, մյուս կողմում ՝ նկար: Հիմքը 33x13x2սմ է, բարձրությունը՝ 28սմ, խորանարդիկները ՝ 5x5x2սմ: | հատ | 2 | 15000 | 30000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/34 | կրթական խաղեր-33 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Գունավոր ձողափայտիկներ»** Խաղ՝ ուղղված հաջորդականություն և օրինաչափություն ընկալման զարգացմանը: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից, լաքից և լամինացված ստվարաթղթից: Պատվանդան՝ 0.25 x 0.08 x 0.01 մ, ձողերի բարձրությունը 0.19 մ, խորանարդիկները ՝ 0.04 x 0.04 x 0.03 մ: | հատ | 2 | 7000 | 14000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37521140/38 | կրթական խաղեր-34 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ «**Ավազի սեղան**» Ավազե սեղան Ուշադրության և երևակայության զարգացման համար: Պատրաստված է լամինցված ԴՍՊ-ից,երկաթե պտուտակներից: Չափսը՝ 60 x 45.5 x 49.5սմ: | հատ | 2 | 45000 | 90000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/39 | կրթական խաղեր-35 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝ »**Թվեր-Թելեր**» Թվեր-թելեր ՝Նպաստում է ՝շարժումների կոորդինացիայի,նուրբ շարժողականության,ուշադրության կենտրոնացման,գունաճանաչողության,գույների համադրման,տարրական մաթեմատիկական հմտությունների,թվի գրաֆիկական պատկերի ընկալման զագացմանը,գրոյի գաղափարի ձևավորմանն ու ուսուցմանը: Չափերը՝ տուփը 38x21x6սմ է, թվերի տակդիրը՝ 17x13x0.7սմ, թելերը՝ յուրաքանչյուր գույնից մեկական՝ 80սմ երկարությամբ: | հատ | 2 | 15000 | 30000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/40 | կրթական խաղեր-36 | Գնման առարկա է հանդիսանում խաղ ՝«**Երկրաչափական ժամացույց**» Եկրաչափական ժամացույց՝ Նպաստում է ՝ շարժումների կոորդինացիայի,նուրբ շարժողականության զարգացմանը ,երկրաչափական պատկերների, թվի,գրաֆիկական պատկերների ընկալմանը,գույների ընկալմանը ,ուշադրության, հիշողության, մտածողության զարգացմանը, ժամացույցից օգտվելու հմտության ձևավորմանը: Չափերը՝ հիմքի տրամագիծը 18սմ է, հաստությունը՝ 2սմ, թվերով դետալների տրամագիծը 3.5սմ, պատկերներով դետալներնը՝ 5.5սմ: | հատ | 2 | 7000 | 14000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/41 | կրթական խաղեր-37 | Գնման առարկա է հանդիսանում խաղ ՝«**Մուրճիկ**» Մուրճիկ՝ Նպաստում է ՝ուշադրության,ձևի ընկալման, Քանակական պատկերացումների, նուրբ շարժողականության ,շարժումների կոորդինացիայի, զգայական ընկալման զարգացմանը, ագրեսիվության նվազեցմանը: Չափերը՝ տուփը՝ 14x6x5սմ, մուրճիկի երկարությունը՝ 17սմ, մուճիկի գլխիկ՝ 5.5x2.8x2.8սմ է: | հատ | 2 | 4500 | 9000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 37521140/42 | կրթական խաղեր-38 | Գնման առարկա է հանդիսանում խաղ ՝«**Փորվածքներով սեղան**» Փորվածքներով սեղան՝ Նպաստում է ուշադրության, տրամաբանական մտածողության, գունազգացողության, նուրբ շարժողականության, զգայությունների զարգացմանը, երկրաչափական մարմինները ճանաչելու, տարբերակելու և տեղադրելու կարողությունների զարգացմանը, սահմանի հասկացողությանընկալման ձևավորմանն ու զարգացմանը: Չափերը՝ սեղանիկի երկարությունը 21 սմ է, լայնությունը՝ 14.5սմ, իսկ բարձրությունը՝ 5.5սմ: | հատ | 2 | 5000 | 10000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37521140/43 | կրթական խաղեր-39 | Գնման առարկա է հանդիսանում խաղ՝«**Վազող գնդակ**» Վազող գնդակ՝ուղված ուշադրության կենտրոնացման, նուրբ շարժողականության,տեսաշարժողական կոորդինացիայի, տարածական կողմնորոշման զարգացմանը, շփման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Չափերը՝ հիմքը 51x6.5x3սմ է, բաձրությունը՝ 37սմ, ճանապարհներ՝ 38սմ: | հատ | 2 | 6500 | 13000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |
| 39292110/2 | Գրատախտակներ-1 | Գնման առարկա է հանդիսանում գրատախտակ՝ «**Գրատախտակ՝ օրգանական ապակիով**» Գրատախտակ՝ օրգանական ապակիով, ուղված մտածողության, երևակայության, կամածին ուշադրության, տրամաբանության և արագ կողմնորոշվելու կարողության, գունազգացողության,նուրբ շարժողականության, շարժումների կորդինացիայի,տեսատարածական ընկալման,վերատպելու կարողությանզարգացմանը, գրաֆիկական պատկերի, սահմանի զգացողության ընկալմանը: Չափերը՝ գրատախտակը՝ 154x105սմ,ոտքերի չափերը՝ 55x8x3,5սմ: | հատ | 2 | 60000 | 120000 | Մինչև 2022թ դեկտեմբերի 1-ը |

ները պետք է լինեն նոր՝ չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:
ւարման վայրը՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհ փ. 16 շենք, Շիրակի մարզպետարան և ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, Լոռու մարզպետարան (բաշխման ցուցակը
, ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը:

ոյն «ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը
ւելու մասին» 1992թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու
ՀՀ օրենքի՝ գնման ենթակա ապրանքներն ազատվում են ԱԱՀ-ից:
ների նմուշ-օրինակները կցվում են:

ԳՆՈՐԴ

---------- Գ.Սաֆարյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

---------- Լ.Սիմոնյան

/ստորագրություն/ Կ.Տ

*Հավելված N 2*
*« 09 » 06 2022թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-22/53 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հաբ<br>նի<br>արը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում. | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր /մինչև 30-ը/ | Ընդամենը |
| | 37521140/1 | կրթական խաղեր-1 | - | - | - | - | - | - | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 |
| | 37521140/2 | կրթական խաղեր-2 | - | - | - | - | - | - | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 |
| | 37521140/4 | կրթական խաղեր-3 | - | - | - | - | - | - | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 |
| | 37521140/7 | կրթական խաղեր-4 | - | - | - | - | - | - | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 37521140/8 | կրթական խաղեր-5 | - | - | - | - | - | - | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 |
| 6 | 37521140/9 | կրթական խաղեր-6 | - | - | - | - | - | - | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 | 238000 |
| 7 | 37521140/10 | կրթական խաղեր-7 | - | - | - | - | - | - | 119000 | 119000 | 119000 | 119000 | 119000 | 119000 | 119000 |
| 8 | 37521140/11 | կրթական խաղեր-8 | - | - | - | - | - | - | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 |
| 9 | 37521140/12 | կրթական խաղեր-9 | - | - | - | - | - | - | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 10 | 37521140/13 | կրթական խաղեր-10 | - | - | - | - | - | - | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 11 | 37521140/14 | կրթական խաղեր-11 | - | - | - | - | - | - | 204000 | 204000 | 204000 | 204000 | 204000 | 204000 | 204000 |
| 12 | 37521140/15 | կրթական խաղեր-12 | - | - | - | - | - | - | 25800 | 25800 | 25800 | 25800 | 25800 | 25800 | 25800 |
| 13 | 37521140/16 | կրթական խաղեր-13 | - | - | - | - | - | - | 176800 | 176800 | 176800 | 176800 | 176800 | 176800 | 176800 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 37521140/17 | կրթական խաղեր-14 | - | - | - | - | - | - | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 5 | 37521140/18 | կրթական խաղեր-15 | - | - | - | - | - | - | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 |
| 6 | 37521140/19 | կրթական խաղեր-16 | - | - | - | - | - | - | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 7 | 37521140/20 | կրթական խաղեր-17 | - | - | - | - | - | - | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 8 | 37521140/21 | կրթական խաղեր-18 | - | - | - | - | - | - | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 |
| 9 | 37521140/22 | կրթական խաղեր-19 | - | - | - | - | - | - | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 | 221000 |
| 0 | 37521140/23 | կրթական խաղեր-20 | - | - | - | - | - | - | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 |
| 1 | 37521140/24 | կրթական խաղեր-21 | - | - | - | - | - | - | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 |
| 2 | 37521140/25 | կրթական խաղեր-22 | - | - | - | - | - | - | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 37521140/26 | կրթական խաղեր-23 | - | - | - | - | - | - | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 |
| 4 | 37521140/27 | կրթական խաղեր-24 | - | - | - | - | - | - | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 |
| 5 | 37521140/28 | կրթական խաղեր-25 | - | - | - | - | - | - | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 |
| 6 | 37521140/29 | կրթական խաղեր-26 | - | - | - | - | - | - | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 7 | 37521140/30 | կրթական խաղեր-27 | - | - | - | - | - | - | 108800 | 108800 | 108800 | 108800 | 108800 | 108800 | 108800 |
| 8 | 37521140/31 | կրթական խաղեր-28 | - | - | - | - | - | - | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 |
| 9 | 37521140/32 | կրթական խաղեր-29 | - | - | - | - | - | - | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 0 | 37521140/33 | կրթական խաղեր-30 | - | - | - | - | - | - | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 1 | 37521140/35 | կրթական խաղեր-31 | - | - | - | - | - | - | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 37521140/36 | կրթական խաղեր-32 | - | - | - | - | - | - | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 3 | 37521140/34 | կրթական խաղեր-33 | - | - | - | - | - | - | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 4 | 37521140/38 | կրթական խաղեր-34 | - | - | - | - | - | - | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 |
| 5 | 37521140/39 | կրթական խաղեր-35 | - | - | - | - | - | - | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 6 | 37521140/40 | կրթական խաղեր-36 | - | - | - | - | - | - | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 7 | 37521140/41 | կրթական խաղեր-37 | - | - | - | - | - | - | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 8 | 37521140/42 | կրթական խաղեր-38 | - | - | - | - | - | - | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 9 | 37521140/43 | կրթական խաղեր-39 | - | - | - | - | - | - | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 |
| 0 | 39292110/2 | Գրատախտակներ-1 | - | - | - | - | - | - | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Գ.Սաֆարյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

Ա.Օրլանյան

/ստորագրություն/

# Բաշխման ցուցակ

| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Կրթական խաղ | Շիրակի մարզ (քանակ) | Լոռու մարզ (քանակ) | Ընդամենը (քանակ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 37521140/1 | «Փափուկ գնդակներ» | 19 | 15 | 34 |
| 2 | 37521140/2 | «Գործիքների հավաքածու» | 19 | 15 | 34 |
| 3 | 37521140/4 | «Աղջիկ-Տղա» | 19 | 15 | 34 |
| 4 | 37521140/7 | «Ձեռնոց» | 19 | 15 | 34 |
| 5 | 37521140/8 | «Դիմակ» | 19 | 15 | 34 |
| 6 | 37521140/9 | «Փափուկ ժամացույց» | 19 | 15 | 34 |
| 7 | 37521140/10 | «Փայտե փազլ 10 կտորից » | 19 | 15 | 34 |
| 8 | 37521140/11 | «Բուրգ կլոր/ուղղանկյուն» | 20 | 16 | 36 |
| 9 | 37521140/12 | «Տնակ երկրաչափական մարմիններով» | 1 | 1 | 2 |
| 10 | 37521140/13 | «Կախարդական տուփ» | 1 | 1 | 2 |
| 11 | 37521140/14 | «Գնացք երկրաչափություն» | 19 | 15 | 34 |
| 12 | 37521140/15 | «Փայտե նյութերի հավաքածու /40-45 կտորից+պարկով» | 1 | 1 | 2 |
| 13 | 37521140/16 | «Ուրախ երկրաչափություն» | 19 | 15 | 34 |
| 14 | 37521140/17 | «Հետագիծ» | 1 | 1 | 2 |
| 15 | 37521140/18 | «Հիշողության գունավոր օղակներ» | 1 | 1 | 2 |
| 16 | 37521140/19 | « Ի՞նչ է սա» | 1 | 1 | 2 |
| 17 | 37521140/20 | «Երկրաչափական պատկերների արկղ» | 1 | 1 | 2 |
| 18 | 37521140/21 | «Կազմիր տրամաբանական զույգը» | 19 | 15 | 34 |
| 19 | 37521140/22 | Խաղ ասոցիացիաներ՝ ուղղված «Տրամաբանական կապեր» | 19 | 15 | 34 |
| 20 | 37521140/23 | «Տրամաբանական կապեր» | 2 | 2 | 4 |
| 21 | 37521140/24 | «Ո՞վ ի՞նչ է ուտում» | 2 | 2 | 4 |
| 22 | 37521140/25 | «Տե՛ս և կազմիր նույնը» | 1 | 1 | 2 |
| 23 | 37521140/26 | «Լոտո ‹‹Տուն և կենցաղ››» | 1 | 1 | 2 |
| 24 | 37521140/27 | «Լոտո ‹‹Բնության բարիքներ›› | 1 | 1 | 2 |
| 25 | 37521140/28 | «Լոտո ‹‹Կենդանական աշխարհ››>> | 1 | 1 | 2 |
| 26 | 37521140/29 | «Որտեղ, որքան, ինչպիսի /գնահատման քարտեր/» | 1 | 1 | 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | քարտեր/» | | | |
| 28 | 37521140/31 | «Իմ օրը /գնահատման քարտեր/» | 1 | 1 | 2 |
| 29 | 37521140/32 | « Խաղանք գույներով» | 1 | 1 | 2 |
| 30 | 37521140/33 | «Կախարդական գրատախտակ» | 1 | 1 | 2 |
| 31 | 37521140/35 | «Տառերի բեռնատար» | 1 | 1 | 2 |
| 32 | 37521140/36 | «Պատկերազարդ խորանարդիկներ» | 1 | 1 | 2 |
| 33 | 37521140/34 | «Գունավոր ձողափայտիկներ» | 1 | 1 | 2 |
| 34 | 37521140/38 | «Ավազի սեղան» | 1 | 1 | 2 |
| 35 | 37521140/39 | «Թվեր-Թելեր» | 1 | 1 | 2 |
| 36 | 37521140/40 | « Երկրաչափական ժամացույց » | 1 | 1 | 2 |
| 37 | 37521140/41 | «Մուրճիկ» | 1 | 1 | 2 |
| 38 | 37521140/42 | «Փորվածքներով սեղան» | 1 | 1 | 2 |
| 39 | 37521140/43 | «Վազող գնդակ» | 1 | 1 | 2 |
| 40 | 39292110/2 | «Գրատախտակ՝ օրգանական ապակիով» | 1 | 1 | 2 |

**ԳՆՈՐԴ**

Գ.Նաֆարյան

/ստորագրություն/ Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Կ.Խիմոյան

/ստորագրություն/ Կ.Տ